

**ՍՓԻՒՐՔԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԸ**  
**ՀԱՅ ԴԱՏԻ ՈՒ ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹԵԱՆ**  
**ՈՒՂԴՈՒԹԵԱՄԲ**  
**1944-1988**

Երբ արդէն պարզ էր, որ հիտլերեան խմբաւորումը պարտութիւն է կրելու, եւ օրակարգային էին դառնալու ժողովուրդների օրինական պահանջների խնդիրները, երբ պարզ դարձան խորհրդա-թուրքական պայմանագրի հետ կապուած հարցերը, երբ արդէն յայտնի էր, որ ետպատերազմեան շրջանի աշխարհաքաղաքական խնդիրները քննարկուելու են յաղթող տէրութիւնների ղեկավարների առաջիկայ կոնֆերանսում, սկիւռքահայութիւնը ներգրաւուեց եռանդուն աշխատանքի, Հայկական հարցը դաշնակից երկրների համաժողովին ներկայացնելու համար:

Սփիւրքահայութիւնը կազմաւորում էր կոմիտէներ, խորհուրդներ, որոնք նախապատրաստում էին առաջիկայ կայանալիք համաժողովներին Հայկական հարցը ներկայացնելու փաստաթղթերի մշակմանը:

1944ին Ռամկավարները Պետրոս Թէրզեանի նախագահութեամբ կազմեցին «Ամերիկահայ ազգային Խորհուրդ», որի հիմնական նպատակը հայ դատն էր լինելու: Նման խորհուրդ կազմուեց նաեւ Ֆրանսիայում, որ գլխաւորում էր Արշակ Զօպանենը:

1945ի Ապրիլի 25ին Սան Ֆրանցիսկոյում բացուելու էր գիտաժողով, որի նպատակն էր անվտանգութեան ու խաղաղութեան պահպանման համար միջազգային կազմակերպութեան ստեղծումը: Վերոյիշեալ Ամերիկայի հայ ազգային խորհուրդը եւ ՀՅԴ Ազգային կոմիտէն միասին մշակեցին եւ կոնֆերանսին մասնակից երկրներին յանձնեցին «Հայ ժողովրդի գործը», «Հայկական հարցի առթիւ» յուշագրերը:

Ինչպէս տեղեկացնում էր «Սովետական Հայաստան» թերթը, յուշագրերը խօսում էին հայկական հողերի միաւորման, սփիւռքահայութեան հայրենիք վերադարձնելու մասին<sup>1</sup>:

Միաժամանակ դիմում յղուեց Մոսկուա, որի մասին հաղորդագրութիւնը եւս տպագրուեց «Սովետական Հայաստան» թերթում:

Դեռևս 1945ի Ապրիլին, Ստալինը ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղապահ, արքեպիսկոպոս Գ. Չորեքչեանին:

Նշուած իրադարձութիւնները խանդավառութիւն առաջացրին: Հանրապետութեան թերթում տպագրուում էին «Արդարութեան ձայնը», «Հասել է ժամանակը», «ՄԵկ ու կես միլիոն մարդկանց ձայնը» վերնագրերով թղթակցութիւններ, նամակներ, աշխատաւորական շրջանակներում կազմակերպւում էին գեկուցումներ, հանդիպումներ, որոնց մասին տեղեկութիւնները ուղարկուեցին կենտրոն<sup>2</sup>:

Դիւանային փաստաթղթերից մէկի վկայութեամբ, դաշնակից եռեակ երկրներին Հայկական հարցի առնչութեամբ հանգամանալից փաստաթուղթ էր մշակել եւ ուղարկել Սիմոն Վրացեանը, որ Ռ. Դարբինեանի հետ ղեկավարում էր ԱՄՆում գործող Ազգային Կոմիտէն<sup>3</sup>:

Սփիւռքի կազմակերպական աշխատանքները ընթանում էին նուիրուածութեան, հայրենիքի ճակատագիրը միջազգային հանրութեանը, դաշնակիցներին ներկայացնելու նպատակամղուածութեան պայմաններում: Աշխատանքների յաջող կազմակերպման նպատակով, Ս. Թէրզեանի ղեկավարութեամբ գործող վերոյիշեալ խորհուրդը ԱՄՆ տարբեր շրջաններում ձեւաւորել էր «յիսուն մասնանիւղ»<sup>4</sup>:

Հայրենանուէր գործունէութիւնից անմասն չէր հայ երիտասարդութիւնը: Նրանք տարածում էին թոռուցիկներ ուղղուած միջազգային հանրութեանը, որտեղ բարձրացնում էին Հայկական հարցը լուծելու, սփիւռքահայութեանը հայրենիք վերադարձնելու խնդիրները:

1 Ի Սովետական Հայաստան, 1945, 13 Ցումիս:

2 ԱՅդ, 15 Ցումիս:

3 ՀՀ ՀՔ կփ ԿՊՍ, 81, գ. 034, գ. 95, թիւ 146:

4 ԱՀԱՐՈՒՆԵԱՆ, Գ., Մեծ եղեռնի մամրում վրայ, Պէյրուք 1964, 195:

**Հայ Ազգային խորհուրդներ կազմուեցին Ռումինիայում, Սիրիայում, Լիբանանում:** Խորհուրդները մշակում էին Հայկական հարցի հետ կապուած համախօսականներ, կազմակերպում էին հանրահաւաքներ, որոնց անունից երեք տէրութիւնների ղեկավարներին էին հասցէագրուում դիմումներ:

**Յատկապէս եռանդուն գործունէութիւն էր ծաւալում Ամերիկահայ Ազգային Խորհուրդը, որի ներկայացուցիչը մասնակցեց Սան-Ֆրանցիսկոյում ընթացող վերոյիշեալ գիտաժողովին, հանդիպումներ էր կազմակերպում տարբեր երկրների պատասխանատու աշխատակիցների հետ, որոնց ընթացքում հանգամանալից տեղեկութիւն էր մատուցւում Հայկական հարցի առնչութեամբ, հայ ժողովրդի պահանջների առթիւ, յոյս յայտնում, որ արդարութեան վերականգնման սկզբունքով վերջապէս Հայկական հարցը լուծում կը ստանայ:**

**Պոտսդամի խորհրդաժողովի գումարումից առաջ Հայկական Ազգային Կոմիտէն յուշագիր ուղարկեց երեք տէրութիւնների ղեկավարներին, որտեղ ասւում էր. «Յանձնախումբս կը հաւատայ եւ կը խնդրէ ձեզմէ արդար լուծում մը հայկական խոռվիչ հարցին, այն է կցել ներկայ վերածաղկեալ Հայաստանի Խորհրդային Հանրապետութեան ոչ միայն կարս եւ Արդահանի շրջանները, այլև Թուրքահայաստանը, որ դաշնակից պետութեանց առաջարկով սահմանուած է նախագահ Ուիլսոնի կողմէ»<sup>5</sup>:**

**Սփիւռքահայ կազմակերպութիւնները, խորհուրդները, կոմիտէները համախօսականներ, խնդրագրեր էին ուղղում նաեւ Պոտսդամից յետոյ 1945ի Մեպտեմբերի 15ին Լոնտոնում գումարուած երեք տէրութիւնների ԱԳՆ համաժողովին, 1945ի Դեկտեմբերին կայացած Մոսկուայի խորհրդակցութեանը:**

**1946ի Մայիսին ՄԱԿի գլխաւոր քարտուղարին ուղերձով դիմեցին ամերիկահայ տասնվեց կազմակերպութիւններ, պահանջելով Վիլսոնի գծած քարտէսով Խորհրդային Հայաստանին միացնել նշուած շրջանները<sup>6</sup>:**

**Սփիւռքահայութեան կազմաւորած խորհուրդն ու կոմիտէները իրենց բեղուն գործունէութեամբ ամերիկեան հասարակական կարծիքը թեքեցին բազմաչարչար հայկական հարցի**

<sup>5</sup> ՄԵԼՔՈՆԵԱՆ, Գ., Աֆիւռքահայութիւնը եւ Հայկական հարցի լուծման խմբիրները (1945-1947), ի Պատմարանափրական հանդէս, 2010, թիւ 2, 45:

<sup>6</sup> Ի ՀԱԱ, ֆ. 326, ց. 1., գ. 119, թիւ 4-5:

պաշտպանութեանը: 1945ի Նոյեմբերին կազմաւորուեց Հայաստանի նկատմամբ արդարացի վերաբերմունքի համար պայքարի ամերիկեան կոմիտէն: Կոմիտէի նախագահ Էդվին Սմիթի շուրջը համախմբուեցին՝ ամերիկեան մի շարք նշանաւոր գործիչներ: Կոմիտէն խնդիր էր դրել հասնել հայրենազուրկ հայութեան վերաբարձին պատմական հայրենիք, Հայաստանի հանրապետութեանը միացնել Թուրքիայի կողմից խլուած հայկական տարածքները. «Հայկական հիմնահարցի արդարացի լուծումը հայկական գաւառների ազատազրումն է»: Գործունէութեան ուղենիշ ընդունելով կոմիտէի անդամ պրոֆեսոր Հորթոնի այս ձեւակերպումը, կոմիտէի անդամներ հանրայայտ գործիչներ կրթութեան բնագաւառի ներկայացուցիչ Դագգանը, գիտնական, դոկտոր Քէնթը, սոցիոլոգիայի պրոֆեսոր Սարոկինը, բեւեռախոյզ Ստեֆանոսը, լրագրող Վ. Դիւրանտը, գրողներ՝ Դրայգերը, Լենգիլը, Աղամիչը օգտագործում էին բոլոր հնարաւորութիւնները պաշտպան կանգնելու Հայկական հարցին:

Կոմիտէն 1945ի Դեկտեմբերին Մոսկուայում գումարուած խորհրդակցութեանը ուղղեց իր դիմումը, որտեղ մասնաւորապէս ասւում էր. «...Կոմիտէն դաշնակից կառավարութիւններից վճռականորէն պահանջում է բաւարարել հայ ժողովրդի արդարացի պահանջները, վերադարձնել հայկական պատմական հողերը Խորհրդային Հայաստանին և արտասահմանեան հայերին հնարաւորութիւն տալ վերադառնալ իրենց հայրենիքը»<sup>7</sup>:

Կոմիտէն նոյն բովանդակութեան դիմում յղեց նաեւ 1946ի Յունուարին գումարուած ՄԱԿի Գլխաւոր Աստեանի առաջին նստաշրջանին մասնակցող ԱՄՆ ներկայացուցիչին, պահանջելով իրագործել նախագահ Վիլսոնի հաստատած հիմնարար որոշումը<sup>8</sup>:

1946ին կոմիտէն Հայկական ազգային խորհրդի հետ մի շարք քաղաքներում կազմակերպուեց ցոյցեր, որտեղ նոյնպէս պահանջում էին հայկական տարածքների ազատագրմանը, հայրենիքին վերամիաւորելու հարցերի լուծում: Հետաքրքրաշարժ էր սենատոր Թորի եղրակացութիւնը: Նա յայտարարեց, որ Թուրքիան արժանի է պատժի համաշխարհային երկու պատերազմների ժամանակ կատարած քայլերի համար, որոնց հակառակ, հայ

7 Ի 44 ՀՔ կի ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 47, թիւ 117:

8 Անդ, թիւ 122:

**ժողովուրդը անձնագոհ պայքար էր մղում դաշնակիցների կողքին<sup>9</sup>:**

1946ի Մայիսին «Նիւ Եորք Թայմ» թերթում տպագրուեց Կոմիտէի նախագահ Սմիթի նամակը, որտեղ դատապարտելով Հայկական հարցի հակառակորդներին, կոչ էր անում Թուրքիայի պատմութեան մութ էջերում տեղադրուած հայկական խնդիրները լուծել արդարութեան սկզբունքներով<sup>10</sup>:

Երբ գումարուեց Պոտսդամի գիտաժողովը, ամերիկահայ ազգային խորհուրդը դիմեց երեք պետութիւնների ղեկավարներին, խնդրելով օրակարգ բերել ու լուծում տալ Հայկական հարցին. «Հայերին պէտք է տրուի հեարաւորութիւն կրկին վերաբնակուել իրենց պատմական հայրենիքում հայկական նահանգներում, որոնք ներկայումս գտնւում են Թուրքիայի կազմում եւ որոնք այժմ պէտք է վերադարձնեն իրենց միակ օրինական տիրոջը՝ Խորհրդային Հայաստանին»<sup>11</sup>:

Այնուհետեւ Խորհրդի հեռագիրը ներկայացնում է Հայոց պատմութեան դրուագները, թուրքական անկրելի լուծը, 1895-1896ի, 1915ի կոտորածները, Թուրքիայի վարած թշնամական քաղաքականութիւնը երկու համաշխարհային պատերազմների ժամանակ եւ աւելացնում, որ հասել է ժամանակը «...երբ քուրքերը պէտք է վեարեն հայերին՝ դարաւոր անարդարութեան համար, թէեւ երանք երբեք չեն կարող քաւել իրենց մեղքը»<sup>12</sup>:

Հայկական սփիւռքի տարբեր գաղթօջախներից Ստալինին, Մոլոտովին, ԱՄՆ նախագահին, պետքարտուղարին, Անգլիայի վարչապետին ուղղուած դիմումների, հեռագրերի, համախօսականների ամբողջ նպատակը Հայկական հարցին արդար լուծում տան էր, Հայերի պատմական հայրենիքը նրա իսկական տէրերին վերադարձնելը:

Սփիւռքի կազմակերպութիւնները, կոմիտէները, խորհուրդները զգալով, որ արդիւնաւէտ աշխատանք տանելու համար անհրաժեշտ է Հայրենի իշխանութիւնների հետ համագործակցութիւն հաստատել, ՀՅԴ ամերիկայի ազգային կոմիտէն 1945ի Օգոստոսի 18ին. ՀԽՍՀ արտաքին գործերի ժողկոմին դիմեց

9 Անդ, թիւ 176:

10 Անդ, թիւ 177:

11 Անդ, թիւ 109:

12 Անդ, թիւ 110:

նամակով, առաջարկելով կազմաւորել յանձնաժողով, որ օգտագործելով համընդհանուր ուժերը, կը պահանջի Վիլսոնի հիմնարար սահմանների իրականացում, տեղահանուած հայերի Հայաստան վերադարձի ապահովում:

**ՀՅԴ** համագործակցութեան առաջարկը մնաց անպատճախան, թէեւ այն կարող էր դառնալ սփիւռքի համախմբման, համընդհանուր ուժերով ազգային խնդիրները լուծելու երաշխիք:

1945ի Յունիսին Հայկական Հարցը իր արտացոլումը գտաւ Ազգային Եկեղեցական ժողովում, որ Յունիսի 7ին նորընտիր Կաթողիկոս Գ. Չորեքչեանի, Մեծն Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի եւ Երուսաղէմի պատրիարքի ստորագրութեամբ դիմում յղեց Ստալինին, նրանից ակնկալելով արդարութեան վերականգնում եւ խլուած տարածքների միացում Հայաստանի Խորհրդային Հանրապետութեանը:

Յունիսի 26ին, երբ փակուեց Ազգային Եկեղեցական ժողովը, պագամաւորները մի նամակ եւս յղեցին Ստալինին. «...մենք եւս ձայնակցելով Ամերիկահայ Ազգային Խորհրդի դեկլարացիային՝ ուղղուած Սան Ֆրանցիսկոյի պատգամաւորներուն եւ մամուլին, մէկ ու կէս միլիոն դժբախտ եւ հայրենազորք հայերու անունով կը դիմենք ճեզ նոյնակն իրագործել հայ ժողովրդի ազգային ամրողացումը, կցելով Թուրքահայաստանի հողերը վերադարձը իրենց մայր երկիրը»<sup>13</sup>.

**ԽՄԿԿ** կկ պաշտօնաթերթ «Պրաւդան» անդրադառնալով նամակին, Հայութեան պահանջը մեկնաբանում է այսպէս. «Արտասահմանի մէկուկէս միլիոն հայութիւնը միջոցով էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ ապա Հայաստանի կառավարութեան դիմում մը կը կատարէ, որպէսզի իր արդար իրաւունքն եղող ծննդավայր հայրենիքը՝ Վան, Պիթլիս եւ Կարին կցուին Սովետ Հայաստանին: Կասկած չկայ, որ Սովետ Հայաստանի ժողովուրդն ու կառավարութիւնը չէին կրնար տարբեր կեցուածք ցոյց տալ արտասահմանի իրենց եղբայրներուն հանդէպ, եթէ ոչ անոնց առջեւ լայն քանալ հայրենիքի դռները... Մեծ անարդարութիւն մըն է նոյնպէս Ռուսական Կովկասի մաս կազմող Սուրմալուի, Կարսի եւ Արտահանի նահանգներուն՝ թուրքերուն գործիլը ...ԿՈՎԿԱՍՍԱՀՅՈՒԹԵԱՆ ԻՐԱԿՈՒՆԻՑԻՆ է ՍՈՒՐՄԱԼՈՒ, ԿԱՐՍ ՈՒ ԱՐՏՍԱՀԱՆ, ԻՄԿ ԹՐԱՎ-

13 ԼԱԶԵՆԱՆ, Գ., Հայաստամը եւ հայ դատը, «Ադամա» հրատ., Նրեւան 1991, 350-351:

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԻՐԱԻՈՒՆՔՆ Է ՎԱՆ, ՊԻԹԼԻՍ ՈՒ ԿԱՐԻՆ ՎԻԼԱ-  
ՑԵԹՆԵՐԸ»<sup>14</sup> (ընդգծումները բնագրային են - Յ. Զ.):

Գրեթէ նոյն բովանդակութիւնն ունէր Հեկ կկ առաջին  
քարտուղար Գ. Յարութիւնեանի 1946ի Փետրուարի 1ին ընտ-  
րողների հետ հանդիպման ժամանակ արտասանած ճառը. «Թուր-  
քիայի կողմից հայկական հողերի վերադարձը նրանց իսկական տի-  
րոջը՝ Սովետական Հայաստանին, արդարացի է, եւ այդ հարցը  
խիստ կենսական նշանակութիւն ունի ամբող հայ ժողովրդի յետա-  
գայ զարգացման համար: Թուրքիայի կողմից բռնի կերպով զարպ-  
ւած այդ (Կարս, Արդահան եւ շրջանները) եւ միւս հայկական մար-  
զերը վերադարձելու վերաբերեալ հողային պահանջը արդարացի  
պահանջ է: Սովետական միութեան ժողովուրդների պաշտպանու-  
թեամբ մենք կիաննենք մեր օրինական պահանջների բաւարարմա-  
նը...»<sup>15</sup>:

Գ. Յարութիւնեանի ելոյթը, տասնամեակներ շարունակ  
լրութիւնից յետոյ, ոգեւորիչ ազգակ հանդիսացաւ արտերկրի  
հայութեան համար: Զգալով հայրենի իշխանութիւնների սրտա-  
ցաւութիւնը պատմական Հայրենիքի ազատագրութեան խնդրում,  
արտերկրի ազգային քաղաքական ուժերը ծաւալեցին առաւել ե-  
ռանդուն գործունէութիւն:

1946ի նոյեմբերի ճին, Նիւ Եորքում, տեղի ունեցաւ հան-  
դիպում ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Վ. Մոլոտովի եւ  
ամերիկահայերի յանձնախմբի միջեւ: Հանդիպումը մտերմական  
զրոյցներից այն կողմ չանցաւ, չարծարծուեցին այլ հարցեր, ո-  
րովհետեւ խորհրդային կողմին հետաքրքրում էր թէ արտերկրի  
հայերը օժանդակութիւն ցոյց կը տան ծրագրուած ներգաղթին:

ԽՍՀՄի թուացեալ հայամէտ քաղաքականութիւնը անհան-  
դստացեց Անդլիային, թէեւ խորհրդային դիւանագիտութիւնը  
հայկական գերխնդիրը ասպարէզ բերելու որեւէ մտադրութիւն  
չունէր: 1945-1946 անդլիական մամուլում տպագրուեցին յօ-  
դուածներ, որոնք թուրքապաշտպան լինելով հանդերձ, անդրա-  
դարձ կատարելով պատմութեան խորքերը, իրենց իսկ դաւերի  
ճանապարհով հայաթափուած հայութեան պատմական հայրենիքի  
առթիւ Անդլիայի արտաքին գործերի նախարարը 1946ի Փետ-  
րուարին համայնքների պալատում յայտարարում էր, թէ խնդիրն

14 Ա.Յ., 353:

15 Ի Սովետական Հայաստան, 1946, 1 Փետրուար:

ունի բազմաթիւ պարագաներ, որոնցից ամենակարեւորը ժողովրդագրութիւնն է՝ «...սակայն որքան ես կրցած եմ ուստիմնասիրել՝ բնակչութեան այնպիսի տեղափոխութիւն եղած է, որ ազգութեան խնդիր այլեւս մնացած չէ»<sup>16</sup>:

Հայկական հարցի նոր զարգացումները կապուած լինելով երկրորդ աշխարհամարտից յետոյ քաղաքական նոր հարթութիւնների ճշգրտման հետ, յատկապէս խորհրդային կողմի համար չունէր ինդրին լուծում տալու յաւակնութիւնը: Այն լոկքարոզութեան բնոյթ ունէր եւ հանդիսանում էր իր ազգեցութիւնից հեռացած թուրքիային զգաստացնելու նպատակը: Հայքագական միտքը կուահում էր այս նոր խաղի իմաստը, բայց պատեհ առիթը օգտագործելը դառնում էր անհրաժեշտութիւն: Այս նպատակով էլ, 1947ի Ապրիլի 30ից Մայիսի 4ը նիւ երթքում գումարուեց «Համաշխարհային Հայկական Կոնգրես», որին մասնակցում էր 22 երկրի 715 ներկայացուցիչ (որոշ աղբիւրներ նշում են 705 ներկայացուցչի մասնակցութեան մասին՝ ՀԱԶԵԱՆ, Գ. եւ ուրիշներ):

Կոնգրէսին ողջոյնի հեռագրեր էին յղել ՀԽՍՀ Գերագոյն Խորհրդի նախագահ Մ. Պապեանը, աշխարհուչակ գիտնական Վ. Համբարձումնեանը, Գէորգ Զ. կաթողիկոսը: Կաթողիկոսի հեռագրում ընդգծում էին Հայութեան առաջ կանգնած կարեւորագոյն խնդիրները՝ «ա) Հայութեան ազգահաւաքումը իր նուիրական հայրենի հողի վրայ եւ բ) վերադառնումը մեր մայր Հայրենիքի բռնագրաւուած հողերի»: Ապա. «Մենք անվերապահ իրաւունք ունենք ե՛ւ պահանջելու, ե՛ւ ակնկալելու մեր արդար դատի պաշտպանութիւնը՝ մանաւանդ այսօր, երբ Ատլանտեան Խարտիան եւ Միացեալ Ազգերի կանոնադրութիւնը ազդարարել են մարդկային իրաւունքների, ազգերի ազատութեան, քաղաքական արդարութեան եւ այլ բարձր սկզբունքները»<sup>17</sup>:

Կոնգրէսը յուշագրով դիմեց ՄԱԿին, որտեղ ներկայացնելով Հայկական հարցի պատմութիւնը, «...յանուն աշխարհի բոլոր հայերուն, յարգանօֆ կը խնդրէ Գերագոյն մարմնեղ հայոց հողային պահանջները դնել Միացեալ Ազգերու օրակարգին վրայ եւ արդար ու հաստատակամ վճռով մը՝ ազատագրել տակաւին քրքական լուծին տակ գտնուող Ուիլսընի սահմանագծած հայապատկան երկրամասը,

16 ՀԱԶԵԱՆ, 360:

17 ԱՀԱՐՈՒՆԵԱՆ, 198:

եւ վերադարձնել զայն իր օրինաւոր տիրոջ՝ Հայկական Հանրապետութեան: Մարդկութիւնը եւ արդարութիւնը կը պահանջեն այս իրաւացի պահանջի իրագործումը ձեր վսեմ ատեանէն»<sup>18</sup>:

**Կոնդրէսի յուշադիրը ուշադրութեան չարժանացաւ, սակայն Կոնդրէսի գոյութիւնն իսկ, նրա ընդունած որոշումը խօսում էին Հայկական հարցի նոր փուլի սկսման մասին, որ նախապատրաստական շրջան լինելով, մեծագոյնս նպաստեց 60ական թուականների ազգային զարթօնքին:**

**Կոնդրէսի գումարումը ԱՄՆում, երբեմն տարակուսանք է առաջացնում այն պարզ հաշուարկով, որ սառը պատերազմի շրջանում, երբ ԱՄՆին յաջողուել էր իր հովանաւորութեան տակ առնել թուրքիային, թոյլատում էր իր տարածքում նմանատիպ մի կազմակերպութեան գործունէութիւնը։ Տարակուսանքը, սակայն երկար կեանք չունեցաւ։ 1947ի Ապրիլին ԱՄՆի նախագահ Տրումենը իր երկրի կողմից յայտարարեց, որ երաշխաւորում է Յունաստանի եւ Թուրքիայի տարածքային ամբողջականութիւնը։ Յայտարարութիւնը ուղղուած լինելով ԽՍՀՄ ակնկալիքների, հայութեան յոյսերի դէմ, Գ. Ահարոննեանի գնահատմամբ՝ ԱՄՆը վերածում էր «հայոց արդարագոյն դատին ոխերիմ հակառակորդ» երկրի<sup>19</sup>։**

**Կոմունիստական, ամերիկեան վարչակարգերի վերաբերմունքը գալիս էր համոզելու, որ Հայկական հարցի բարձրացման միակ երաշխիքը սփիւռքահայութեան կազմակերպուած գործունէութիւնն է։**

**Սկսուեց սփիւռքի կազմակերպական գործընթացը, որին ուղղութիւն էր տալիս 1972ի Վաշինգտոնում ստեղծուած «Հայկական համագումարը»։ Կազմակերպուեցին հայրենակցական միութիւններ, որոնք հիմնականում զբաղւում էին բարեգործական աշխատանքներով եւ հայութեան բեկորները փրկում ուժացման վտանգից։ Արդիւնաւէտ գործունէութիւն ծաւալեցին ազգային քաղաքական կուսակցութիւնները։ Ռամկավարները կազմաւորեցին թէքէեան մշակութային միութիւնը, Հնչակեանները՝ Հայ Մարգական Միութիւնը, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը՝ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւնը, Հայ Մարմարզական Հնդհանուր Միութիւնը, Հայ Օգնութեան**

18 ԼԱ.ԶԵԱՆ, 378:

19 ԱՀԱՐՈՆՆԵԱՆ, 200:

**Միութիւնը:** Տպագրուում էին մի շարք թերթեր ու ամսագրեր, օգտագործուում էին օտարալեզու թերթերն ու հրատարակութիւնները, որոնց էջերում զետեղուում էին Հայկական հարցին նուիրուած յօդուածներ: Արժէքաւոր գործունէութիւն ծաւալեցին Հայ Կաթողիկէ Եկեղեցին եւ Աւետարանականները, բացուեցին դպրոցներ ու ակումբներ, հաւաքատեղիներ, որոնցում տարւում էին քարոզչական աշխատանքներ: Հայապահպանութեան, ազգային գիտակցութեան բարձրացմանը իրենց լուման բերեցին Պէյլութի, Երուսաղէմի, Հալէպի, Կիպրոսի Մելքոնեան վարժարանները: Միաժամանակ պայքար էր տարւում սփիւռքը տարանջատումից հեռու պահելու խորհրդային քաղաքականութեան դէմ: Սփիւռքի գօրեղացուումը դիտելով ազգային խնդիրների լուծման կարեւորագոյն լծակ, մեծ աշխատանքներ տարուեցին հայութեան տնտեսական կարողութիւնների պահպանման ու աւելացման ուղղութեամբ, նպատակասլաց էին օգտագործուում բարեգործական ու կտակուած հիմնադրամները:

70ական թուականների այս վերելքը այդուհետ պէտք է օգտագործուէր Մեծ Եղեռնի համաշխարհային ճանաչման գործին, հիմքեր նախապատրաստուէին Հայկական հարցի լուծման համար: Հետեւելով մայր Հայրենիքի օրինակին, որտեղ 1967ին կառուցուեց Մեծ Եղեռնի յուշակոթողը, սփիւռքի հայաշատ կենտրոններում եւս փորձեր էին արւում յուշարձանների կառուցման համար: Առաջիններից մէկը այդ յաջողուեց մարսելահայութեանը եւ 1973ին Մարսելում բացուեց Եղեռնի անմեղ գոհերին նուիրուած յուշարձանը: Նոյն թուականին ՄԱԿի ցեղապաշտութեան եւ ցեղասպանութեան յանձնաժողովը քննարկեց հայոց Մեծ Եղեռնի ինդիրը եւ տեղեկագրում նրան նուիրեց Յօդուածը:

1973ի Յունուարի 27ին համայն սփիւռքը, մայր Հայրենիքի հայրենասիրական ուժերը, աշխարհի արդարամիտ ժողովուրդները ականատեսը եղան Եղեռն տեսած, ընտանիքի 27 անդամներին կորցրած, 78ամեայ մի հայորդու արդար ցասումին: Բնիկ Կարնեցի Գուրգէն Եանիկեանը, Սանտա Բարբարա քաղաքում սպանեց Թուլքիայի գլխաւոր հիւպատոսին ու նրա օգնականին: Հայկական հարցի լուծման նոր փուլ էր ձեւաւորուում. Գ. Եանիկեանի խօսքերով ասած՝ «Յոր տեսակի պատերազմի» փուլը: Հայրենասիրին պաշտպաննելու համար կազմուեց «Եանիկեանի բարեկամներու» յանձնախումբ: Դատավարութիւնն սկսուեց 1974ի Մայիսի 29ին, տեւեց չորս շբաթ: Ամերիկեան դատարանը անկարող եղաւ կրկնելու գերմանական դատարանի մարդասիրական

քայլը եւ մեծ հայրենասէրին դատապարտեց ցմահ բանտարկութեան: 88ամեայ հիւանդ Եանիկեանը ազատուեց բանտից 1984ին եւ նոյն թուականի Փետրուարի 27ին կնքեց իր մահկանացուն, իր համեստ ներդրումը կատարելով Հայկական հարցը միջազգային ատեաններ բարձրացնելու ճանապարհին:

«Ինչ-ինչ պատճառներով, նրանք որոնք վեցցրել էին իրենց վրայ պաշտպանելու ու հետապնդելու Հայկական Դատը, - գրում էր Գ. Եանիկեանը, իւրայատուկ պատասխան տալով նաեւ այն հարցին, թէ ինչո՞ւ կատարեց իր ահաբեկչութիւնը, - յետ էին մնացել կեանքի օրուայ թելադրանքներից եւ զրադուած էին ուրիշ հարցերով, որոնք յանախ կապուած էին իրենց անձնական շահի հետ, իսկ դրութեան արդիւնքը եղաւ այն, որ մեր այդ Հայկական Դատը գերեզման էր դրուած ու պատրաստում էին ծածկել մոռացութեան քողով, որ հարցը վերջնական փակուի:

Որպէս մի հայ անհատ ես չէի կարող ընդունիլ այդ: Պապերից ստացած արդարութեան ոգին իմ մէջ հրարուխ դարձաւ, դուրս ժայթեց ու այրեց բաղումը կատարողների դէմքերը:

Ու ես մաքրելով տասնեակ տարիների մոռացութեան փոշին, մեր դատը, Հայկական Դատը դրի մարդկութեան առաջ:

...Պատմութիւնը մեզ փաստում է, որ խօսքերը քամին է տանում, խստումները մոռացուում են, արդարութիւն ու ազատութիւն քառերը կորցնում են իրենց իմաստները, եթէ նրանք չեն պաշտպանում անհատներից կազմուած ուժեղ բռունցքով: Թող իմ սիրելի երիտասարդ մատադ սերունդը գիտնայ, որ դեռ մարդկութեան ամբողջ պատմութեան ընթացքին ոչ մի անգամ չի պատահել, որ մի ցեղի ազատութիւնը տրուի նրան ոսկէ պնակի վրայ...»<sup>20</sup>:

Ինչպէս եւ կանխատեսում էր Գ. Եանիկեանը, սիիւռքահայութեան պայքարը տուեց իր առաջին պտուղը: 1974ի Մարտի 6ին ՄԱԿի մարդու իրաւունքների յանձնաժողովը հայոց Մեծ Եղեռնը ճանաչեց որպէս 20րդ դարի առաջին ցեղասպանութիւն: 1975ի Ապրիլի 8ին ԱՄՆ կոնգրեսի ներկայացուցիչների պալատը ընդունեց բանաձեւ, որով ճանաչում էր հայոց ցեղասպանութիւնը: 1975ին Եղեռնի զոհերի յուշարձաններ կառուցուեցին Աթէնքում, Միլանում, Լիբանանի Բիդֆայա գիւղում:

1975ին կազմաւորուեց «Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակը» (ՀԱՀԳԲ), կամ ԱՍԱԼԱՆ, որի կարգախոսն էր՝

20 Ի Հայաստանի ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակ, Ա.Տ., 1975-1995, 13:

«Վասն Հայութեան, Վասն Հայրենեաց»: Նպատակը կանխորոշել էր Գ. Եանիկեանը, ՀԱՀԳԲը «...կենդանի բռունցք է որ պիտի ծունկի թերէ մեր ոխերիմ թշնամի թուրքը եւ դնէ մարդկութեան առաջ մեր իրաւացի պահանջները...»<sup>21</sup>:

Պայքարը տարուելու էր ոչ թէ միայն թուրքիայի դէմ, այլ նրա հովանաւորների ու հայութեան ողբերգութիւնը կոծկողների դէմ: Աշխարհի տարբեր մայրաքաղաքներում ու երկրներում կազմակերպուած ահաբեկչութիւններին զոհ դարձան 41 թուրք դեսպաններ ու հիւպատուններ, Հայկական հարցի դէմ 73 թուրք մեղանչողներ: Մինչեւ 1983ի պառակտումը, ՀԱՀԳԲ զգալի ներդրում ունեցաւ Հայկական հարցը միջազգային ատեաններ հասցնելու գործում, շարժուեց 70 տարիների սառոյցը եւ աշխարհի ժողովուրդներին հասու դարձաւ պատմական անարդարութիւնը եւ առաջադէմ մարդկութեան պարտադրանքով տարբեր երկրներ սկսեցին ուշադրութեան դարձնել Հայկական հարցին:

1975ի Հոկտեմբերին կազմաւորուեց «Հայկական ցեղասպանութեան արդարութեան մարտիկներ» (ՀՅԱՄ) կազմակերպութիւնը, որ ուխտել էր ահաբեկչութեան ենթարկել թուրք դեսպաններին ու պաշտօնեաններին: Արդարութեան մարտիկները դիմելով այդ ինքնազոհութեանը, ցանկանում էին ճանաչում բերել հայոց ցեղասպանութեանը եւ լուծման արժանացնել բազմաչափար Հայկական հարցը: Բնաբան ունենալով զինուած պայքարի գաղափարը, մարտիկները Եւրոպայում ու ԱՄՆում իրականացրին մի շարք գործողութիւններ, որոնցից ամենանշանաւորը Լիսարոնում թուրքական դեսպանատան գրաւումն ու պայթեցումն էր:

Բացի մեծ ճանաչում եւ հանրայայտ գործողութիւններ իրականացրած վերոյիշեալ կազմակերպութիւններից, գործում էին նաև չուրջ 10 գաղտնի կազմակերպութիւններ, որոնցից նշանաւոր էին «Հայաստանի ազատագրութեան կազմակերպութիւն»ը, «Հայ ազգային շարժում»ը, «Հայկական եղեռնի վրիժառութեան կոմանդուս»ը, «Հայաստանի գաղտնի բանակ»ը, «Հայկական Գործի պաշտպանութեան կոմիտէ»ն եւ այլն:

Հայկական հարցը միջազգայնացնելու գործում ծանրակշիռ լուման ներդրեցին ՀՅԴ «Հայ Դատի» յանձնախմբերը, որոնք գործում էին բազմաթիւ երկրներում: Հայ աւանդական կուսակցութիւնները անտեսելով առկայ տարածայնութիւնները, միաս-

21 Անդ, 19:

նական պայքար ծաւալեցին հայ ժողովրդի գերխնդիրը համաշխարհային հանրութեանն ու կառավարութիւններին իրազեկելու, պատմական արդարութիւնը վերականգներու ուղղութեամբ:

### ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՏԻԿՅԱՆ

#### **Summary**

## **THE STRUGGLE OF DIASPORA FOR ARMENIAN DEMANDS**

**HOVHANNES ZATIKYAN**

With the help of archival documents and literature, the article once more exposes the idea of the devotion of emigrant Armenians to their homeland and to the solution of the Armenian question. The article also emphasizes the heroic work, concerning further development of the Armenian question, which was carried out by the Armenians of the Diaspora during 1945-1988.